«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Մարտավարության տեսակները, դրանց հարմարեցումը ժամանակակից համազորային մարտում:
Առարկա՝	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն
Ուսուցիչ՝	Շամիր Աղաջանյան
Դպրոց	«Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

Ներածություն 3-5 էջ

§1. Դասակի (ջոկի) հրամանատարի աշխատանքի կարգը մարտ կազմակերպելիս 5-9էջ

§2. Դասակի (ջոկի) հրամանատարի աշխատանքի կարգը պաշտպանություն կազմակերպելիս 9-13 էջ

Եզրակացություն - 14 էջ

Գրականության ցանկ -15էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարտը երկու և ավել ստորաբաժանումների զինված ընդհարումն է: Մարտը հաղթանակի հասնելու միակ միջոցն է: Համազորային մարտին մասնակցում են տարբեր տեսակի զորամիավորումներ և զորատեսակներ: Մրտը կարող է լինել համազորային, հակաօդային, օդային և ծովային: Ժամանակակիկց մարտը համազորային է , որին մասնակցում են բոլոր զորատեսակները և գեր ժամանակակից զինատեսակները՝ ԱԹՍ-ը, գերձայնային հրթիռները, 5-րդ սերնդի ռազմական ավիացիան:

Ժամանակակից ռազմատխնիկական, ռազմաքաղաքական զարգացումները, սպառազինությունների զարգացման տեմպերը և ուղղվածությունները նոր մարտահրավերներ ենցանկացած պետության առջև: Դրանք պետք է հասկանալ և ճիշտ ժամանակին ընդունել որոշումներ:

Ժամանակակից մարտական գործողությունների ծանրության կենտրոնը վաղուց շարժվում է դեպի երկինք:

Այս պարզ ճշմարտության ընկալումը կարող է հաղթանակներ ու գերակայություն ապահովել ապագայում և հակառակը՝ կորուստներ պատճառել այն չընդունելու պարագայում: Մեզանում, որպես կանոն, ուշադրություն է դարձվում ցամաքային զինատեսակների և զորատեսակների զարգացմանը, իսկ ԹՍ-ների զարգացումը դեռևս թերի է: Այդպիսի ուշադրությունն ԱԹՍ-ի նկատմամբ չի կարող լինել բավարար, քանզի այս զինատեսակները կարևոր են, և օրեցօր նրանց դերն ու նշանակությունն ավելի են մեծանում: Յուրաքանչյուր դարաշրջանում գերակայող մի զորատեսակ իր նշանակությամբ թելադրում է մարտավարության ձևաչափը: Փոփոխվում է պատերազմի վարման ավանդական պատկերացումը: ԱԹՍ-ները միայն նոր տեսակի ԹՍ-ներ չեն, դրանք գալիք պատերազմներում նոր տեսակի ավիացիա են, ցավոք, այս պարզ ճշմարտությունը մինչ օրս հասկացել են շատ քչերը;

Փորձը ցույց է տալիս, որ հաղթանակի հասնելու հիմնական գործոններից է ճիշտ մարտավարության կազմակերպումը: Եվ որքան բարդանում է մարտական գործողությունների վարումը, այնքան աճում է կառավարման դերն ու նշանակությունը: Ժամանակակից մարտի կարևոր էլեմենտներից են կառավարման համակարգը և քողարկման անընդհատությունը:

Ապագա պատերազմներում մարտական գործողությունները կվարվեն նոո սվերայի բոլոր ոլորտներում, կբնութագրվեն նպատակների վճռականությամբ, ուժերի գերագույն լարմամբ,

արագընթացությամբ և շարժունակությամբ, դրանցում բազմատեսակ ժամանակակից ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ հագեցած զորքերի մեծ զանգվածների մասնակցությամբ:

Այդպիսի մարտական գործողություններում հաջողությունը պայմանավորված կլինի ոչ միայն ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածությամբ և բարձր մարտունակությամբ, այլև ստորաբաժանումների հրամանատարների մարտավարության կազմակերպման առավել քան գերազանց պատրաստվածությամբ:

Կառավարման հիմքը հրամանատարի որոշումն է: Ժամանակակից պայմաններում որոշում ընդունելու համար պահանջվում է ուսումնասիրել և վերլուծել բազմաթիվ գործոններ որոնք կարող են հայտնի լինել մինչև մարտական գործողությունները և հիայտ գալ մարտական գործողությունների ընթացքում:

Այժմ գործնականում չկա զորքերի կյանքում և գործունեության մեջ ծագող որևե հարց, որը կարող է դուրս մնալ հրամանատարի տեսադաշտից հատկապես մարտական գործողությունների ընթացքում, քանզի աննշան վրիպումը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Իր աշխատանքում մշտապես ցուցաբերելով ստեղծագործ մոտեցում և նախաձեռնողականություն, ճշգրիտ կանխատեսման շնորհիվ հրամանատարը պարտավոր է ժամանակի սղության պայմաններում նախապատրաստել առաջարկություններ, ինչպես ստեղծված իրավիճակի, այնպես էլ այլ հարցերի վերաբերյալ որոնք կարող են ծագել մարտական գործողությունների ընթացքում:

Վերը նշվածից ելնելով կարևորվում է Դասակի (ջոկի) հրամանատարի աշխատանքի կարգը մարտ կազմակերպելիս, ուստի հանրակրթական դպրոցում մարտավարության թեմաների ուսուցումը սկսվում է հենց դասակի(ջոկի) հրամանատարների ընտրությունից : Մարտավարության թեմաներն ուսուցանելիս առաջնային է ստորաբաժանումների (ջոկի) կազմով կատարել գործնական դասեր, ինչպես նաև մարտավարության տեսական դասերի ընթացքում կիրառել համագործակցային և ինտերակտիվ դասավանդման մեթոդները, որպեսզի աշակերտները ցուցաբերեն համախմբված մոտեցում կատարվելիք աշխատանքի և հանձնարարության հանդեպ, կատարեն վարժանքները համախմբված և հասկանան, որ յուրաքանչյուրի սխալը կլինի խմբի (ջոկի) անհաջողության պատճառ և յուրաքանչյուրի կողմից առաջադրանքի ճիշտ կատարումը կհանգեցնի խմբի (ջոկի) առջև դրված խնդրի կատարումը:

Աշակերտներին մարտավարություն ուսուցաննելիս նրանցից յուրաքանչյուրին սովորեցնում ենք իր տեղը մարտակարգում և մարտի վարման սկզբնական տարրերի տիրապետում, մարտավարության տարբեր տեսակի հմտություններ հրաման տալու և կատարելու կարգ:

Հետազոտությունն իրականացրել եմ այն սկզբունքով, որ յուրաքանչյուր սովորողի դիտարկում եմ որպես մարտը վարող և մասնակից, որպեսզի նախքան ծառայության մեկնելը սովորողը տիրապետի մարտավարական տարբեր հնարքներին և իրադրություններին ինչպես շարքային, այնպես էլ ջոկի հրամանատար, և մեկնելով ծառայության պատրաստ լինի լսել հրամանատարի հրամանը՝ հասկանա թե ինչին է միտված այդ հրամանը:

§ **Դասակի (ջոկի) հրամանատարի աշխատանքի կարգը մարտ կազմակերպելիս**:

Դասակի (ջոկի, տանկի) հրամանատարը մարտը կազմակերպելու, որպես կանոն աշխատանքն իրականացնում է տեղանքում կամ տեղագրական քարտեզի վրա: Դա նրան թույլ է տալիս ավելի մանրամասնորեն ուսումնասիրել ստեղծված իրադրությունը, ընդունել տվյալ պայմաններում նպատակահարմար որոշում, ջոկերին (ենթականերին) դնել կոնկրետ մարտական խնդիրներ, կազմակերպել փոխգործակցություն և մարտի բազմակողմանի ապահովում:

Իրավիճակը այլ պայմաններում դասակի (ջոկի, տանկի) հրամանատարն ընդունում է որոշում, տալիս է մարտական հրաման և կազմակերպում է փոխգործակցություն տեղագրական քարտեզով կամ տեղանքի մանրակերտով: Հարմար իրավիճակի դեպքում նա դուրս է գալիս տեղանք և տեղանքում ճշգրտում է իր որոշումն ու մարտը կազմակերպելու մյուս հարցերը: Այդպիսի հնարավորություն չունենալու դեպքում հրամանատարը ենթակաների խնդիրները ճշգրտում է տեղանքում դեպի գրոհի անցնելու բնագիծ նրանց առաջ քաշելու ժամանակ, իսկ երթային պահպանությունում և հետախուզությունում կատարվող գործողությունների դեպքում՝ հակառակորդին հայտնաբերելուն պես:

Մարտ կազմակերպելու աշխատանքը դասակի հրամանատարը սկսում է մարտական խնդիրն ստանալուն պես: Սովորաբար դա իրագործվում է հետևյալ հաջորդականությամբ.

- ստացած խնդրի պարզաբանում,
- իրավիճակի գնահատում,
- որոշման ընդունում,
- տեղազննում,
- մարտական հրամանի արձակում,
- փոխգործակցության, մարտական ապահովման և կառավարման կազմակերպում,
- անձնակազմի, սպառազինության ու տեխնիկայի մարտին նախապատրաստման կազմակերպում,
- մարտական խնդիրը կատարելուն դասակի պատրաստականության ստուգում,

- մարտական խնդիրը կատարելուն դասակի պատրաստականության մասին վաշտի հրամանատարին զեկուցում:

Ստացած խնդիրը պարզաբանելիս դասակի հրամանատարը պետք է.

- ճշտի, թե համապատասխանու՞մ է արդյոք զինված ընդհարումների իրավունքի նորմերին,

- իմանա դասակի գործողությունների ուղղությամբ ինչ օբյեկտներ են ոչնչացվում ավագ հրամանատարի միջոցներով,

- հասկանա վաշտի ու դասակի խնդիրը,

- իմանա հարևան ստորաբաժանումների խնդիրներն ու դրանց հետ փոխ-գործակցության կարգը,

- իմանա խնդրի կատարմանը պատրաստ լինելու ժամանակը:

Խնդիրը պարզաբանելու հիման վրա դասակի հրամանատարը սովորաբար որոշում է.

- վաշտի կողմից կատարվող խնդրում դասակի տեղն ու դերը,

- որ օբյեկտներն (նպատակակետերն) է անհրաժեշտ խոցել դասակի միջոցներով,

- մարտի որ փուլում և հարևան ստորաբաժանումներից որի հետ է անհրաժեշտ պահպանել սերտ փոխգործակցությունը,

- ինչպես շարել մարտակարգը,

- մարտը կազմակերպելու համար ինչքան ժամանակ կա և ինչպես այն ավելի լավ բաշխել:

Իրավիճակը գնահատելիս դասակի հրամանատարն ուսումնասիրում է.

- հակառակորդի կազմը, դիրքն ու գործողությունների հնարավոր բնույթը, նրա կրակամիջոցների տեղաբաշխման տեղերը,

- դասակի, տրված ստորաբաժանումների վիճակը, ապահովվածությունն ու հնարավորությունները ,

- հարևանների կազմը, դիրքը, գործողությունների բնույթն ու նրանց հետ փոխգործակցության պայմանները,

- տեղանքի բնույթը, դրա պաշտպանական ու քողարկիչ հատկությունները, նպաս-տավոր մատույցները, արգելափակոցներն ու արգելքները, դիտարկման և կրակ վարելու պայմանները,

- տարվա եղանակը, օրվա ժամանակն ու եղանակի վիճակը և դրանց ազդեցությունը մարտի նախապատրաստման ու վարման վրա:

Իրավիճակը գնահատելու արդյունքում դասակի հրամանատարը որոշում է.

- ինչ ուժերով հակառակորդն սպասել դասակի գործողությունների ճակատի դիմաց, նրա ուժեղ ու թույլ կողմերը, ուժերի ու միջոցների հնարավոր հարաբերակցությունը,

- դասակի մարտակարգը, ջոկերին (տանկերին) դրվող մարտական խնդիրները, ուժերի ու միջոցների բաշխումը,

- մարտի որ փուլում և հարևաններից ում հետ պահպանել առավել սերտ փոխգործակցությունը,

- քողարկման ու տեղանքի պաշտպանական հատկությունների օգտագործման կարգը:

Ստացված խնդրի պարզաբանումն ու իրավիճակի գնահատումը դասակի հրամանատարի որոշում ընդունելու հիմքն է հանդիսանում:

Ո ր ո շ մ ա ն մեջ դասակի հրամանատարը սովորաբար սահմանում է.

- ստացված խնդիրը կատարելու կարգը (թե որ հակառակորդին, որտեղ և ինչ միջոցներով խոցել, այդ դեպքում կիրառվող՝ նրան խաբելու միջոցառումները),

- ջոկերի (տանկերի), տրված ստորաբաժանումների և կրակամիջոցների խնդիրները,

- ղեկավարման կազմակերպումը:

Տեղազննում կատարելիս դասակի հրամանատարը տեղանքում նշում է կողմնորոշիչները, հակառակորդի դիրքը և գործողությունների ամենահավանական բնույթը« մարտական գործողությունների շրջանից միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության ենթակա անձանց տարհանման երթուղիները, ճշտում է ջոկերի (տանկերի) առաջադրանքները և մարտում տեղանքի օգտագործմանն առնչվող այլ հարցեր, ջոկերի դիրքերի տեղը, հետևակի մարտական մեքենաների, զրահապատ փոխադրիչների, տանկերի, հակատանկային և այլ կրակային միջոցների կրակային դիրքերը, արգելափակոցները և դրանց անցումները, միջանկյալ դասակի առաջխաղացման երթուղին և մոտոհրաձգային ջոկերի՝ մեքենաներից իջնելու տեղերը:

Դասակի հրամանատարի կողմից մարտի համար նպատակահարմար որոշում ընդունելը ինքնըստինքյան դեռևս չի ապահովում ստացված մարտական խնդրի հաջող կատարումը: Որոշումը դառնում է ջոկերի (տանկերի) կառավարման հիմք և օրենք ենթակաների համար միայն նրանցից յուրաքանչյուրի կողմից կոնկրետ մարտական խնդիր ստանալուն պես: ՈՒստի մարտական խնդիրները կատարողներին ժամանակին հասցնելը դասակի հրամանատարի կարևորագույն պարտականություններից է:

Մարտ կազմակերպելիս մարտական խնդիրները ենթականերին հասցվում են, որպես կանոն, մարտական հրամանի ձևով: Դասակի հրամանատարը պետք է այն շարադրի համառոտ, հստակ և այնպես, որ ենթակաները պարզ հասկանան իրենց խնդիրը:

Մ ա ր տ ա կ ա ն հ ր ա մ ա ն ո ւ մ դասակի հրամանատարը նշում է.

- կողմնորոշիչները,

- հակառակորդի կազմը, դիրքն ու գործողությունների բնույթը, նրա կրակամիջոցների տեղաբաշխման տեղերը,

- վաշտի ու դասակի խնդիրները,

- դասակի գործողությունների ուղղության վրա գտնվող և ավագ հրամանատարների միջոցներով ոչնչացվող օբյեկտներն ու նպատակակետերը, ինչպես նաև հարևանների խնդիրները.

- ջոկերին (տանկերին), տրված ստորաբաժանումներին և կրակադիրքերին միջոցներին մարտական խնդիրները, իսկ մոտոհրաձգային դասակի հրամանատարը, բացի դրանից, դիպուկահարին, հրաձիգ սանիտարին և մյուսներին դրվելիք մարտական խնդիրները,

- գերիների հավաքատեղին և տարհանման երթուղին,

- խնդիրը կատարելուն պատրաստ լինելու ժամանակը,

- իր տեղն ու տեղակալին:

Մարտին պատրաստ լինելու մասին դասակի հրամանատարը սահմանված ժամին զեկուցում է վաշտի հրամանատարին:

Ջոկի հրամանատարի աշխատանքի կարգը մարտ կազմակերպելիս

Ջոկի հրամանատարը մարտին նախապատրաստվելն սկսում է դեռևս նախքան մարտական խնդիր ստանալը: Ամենից առաջ նա կազմակերպում է հետևակի մարտական մեքենայի (զրահափոխադրիչի), տանկի տեխնիկական սպասարկումը, նյութական միջոցների պաշարների համալրումը: Տեխնիկական սպասարկման ժամանակ առաջին հերթին վառելիքով լրալցավորվում և զինամթերքով համալրվում են հետևակի մարտական մեքենան (զրահա-փոխադրիչը) և տանկը, այնուհետև ստուգվում է դրանց տեխնիկական վիճակը, և վերացվում են հայտնաբերված անսարքությունները:

Մարտական խնդիր ստանալուն պե**ս ջոկի հրամանատարը ձեռնամուխ է լինում մարտը կազմակերպելուն:** Մարտ կազմակերպելը, որպես կանոն, ներառում է՝

- խնդիրը պարզաբանելը,
- իրավիճակը գնահատելը,
- որոշում ընդունելը,
- մարտական հրաման տալը,
- ՀՄՄ-ի (ԶՓ-ի, տանկի), սպառազինության պատրաստականությունն ստուգելը,
- պատրաստականության մասին դասակի հրամանատարին զեկուցելը:

Մ տ ա ց վ ա ծ խ ն դ ի ր ը պ ա ր զ ա բ ա ն ե լ ի ս ջոկի հրամանատարը պետք է.

- հասկանա դասակի ու ջոկի խնդիրը,
- իմանա հարևանների խնդիրները,
- իմանա խնդիրը կատարելուն պատրաստ լինելու ժամանակը, այն կատարելու կարգն ու ժամկետները:

Ի ր ա վ ի ճ ա կ ը գ ն ա հ ա տ ե լ ի ս նա պետք է.

- պարզի, թե որտեղ է գտնվում հակառակորդն ու ինչ է նա անում, ինչպես նաև նրա կրակամիջոցների տեղաբաշխման տեղերը,
- ուսումնասիրի տեղանքը, դրա պաշտպանական ու քողարկիչ հատկությունները, նպաստավոր մատույցները, արգելափակոցներն ու արգելքները, դիտարկման և կրակ վարելու պայմանները:

Խնդիրը պարզաբանելու և իրավիճակը գնահատելու հիման վրա ջոկի հրամանատարը որոշում է անձնակազմին դրվող խնդիրները, ինչը մարտի համար նրա որոշման գլխավոր բովանդակությունն է:

Մարտ կազմակերպելիս ջոկի հրամանատարը մարտական խնդիրներն անձնակազմին հասցնում է սովորաբար **մ ա ր տ ա կ ա ն հ ր ա մ ա ն ի** ձևով, որում նշում է.

- կողմնորոշիչները,
- հակառակորդի կազմը, դիրքն ու գործողությունների բնույթը, նրա կրակամիջոց-ների տեղաբաշխման տեղերը,
- դասակի ու ջոկի (տանկի) խնդիրը,
- հարևանների խնդիրները,
-անձնակազմին՝ նշանառու-օպերատորին (հրանոթի նշանառուին, զրահափոխադրիչի գնդացրի նշանառուին), գնդացրորդին, նռնականետորդին, մեխանիկ-վարորդին (վարորդին) և մնացած անձնակազմին դրվող խնդիրները, իսկ նռնականետային ու հակատանկային ջոկերի հրա-մանատարները, բացի դրանից, հաշվարկներին դրվող խնդիրները,
-ազդարարման, կառավարման, փոխգործակցության ազդանշաններն ու դրանցով կատարվող գործողությունների կարգը,
-խնդիրը կատարելուն պատրաստ լինելու ժամանակն ու իր տեղակալին:

Անձնակազմին խնդիրներ դնելիս ջոկի հրամանատարը ցույց է տալիս յուրաքանչյուր ենթակայի տեղը մարտակարգում, որոշում է դիտարկման և կրակ վարելու կարգը:

Մարտական հրաման տալուց հետո ջոկի հրամանատարը ջոկը նախապատրաստում է առաջադրանքների կատարման՝ հրթիռների զինամթերքի պաշարի համալրման, հետևակի մարտական մեքենայի (զրահապատ փոխադրիչի), տանկի տեխնիկական սպասարկման, ինժե-ներական ապահովման սահմանված աշխատանքների կատարման, այնուհետև ստուգում է անձնակազմի առաջադրանքի յուրացումը, մարտի համար անհրաժեշտ ամեն ինչով նրա

ապահովվածությունը և դասակի հրամանատարին զեկուցում է մարտին ջոկի `պատրաստ լինելու մասին:

§Դասակի (ջոկի) հրամանատարի աշխատանքիկարգը պաշտպանություն կազմակերպելիս:

Ստանալով մարտական առաջադրանքը՝ ***հակառակորդի հետ շփման բացակայության պայմաններում դասակի հրամանատարը*** որոշում է ընդունում և այն արտացոլում քարտեզում, այդ մասին հայտնում է ջոկերի հրամանատարներին, դասակը հասցնում է նշված հենակետ կամ դրա մատույցներում գտնվող թաքստոց ծածուկ տեղավորում է այն, կազմակերպում անմիջական պահպանությունը: Դրանից հետո նա ջոկերի և տրված միջոցների հրամանատարների հետ անցկացնում է տեղազննում, տալիս է մարտական հրաման, կազմակերպում փոխգործողությունն ու կրակային համակարգը, մարտական ապահովումը և ղեկավարումը: Այնուհետև դասակի հրամանատարը հենակետում կազմակերպում է դիրքավորումը, ստեղծում է մարտակարգը և կրակային համակարգը, կազմակերպում է դիտարկումը և հենակետի ինժեներական սարքավորումը:

Տեղազննության ժամանակ դասակի հրամանատարն ուսումնասիրում է տեղանքը, ջոկերի հրամանատարներին ցույց է տալիս կողմնորոշիչները, ճշտում հակառակորդի դիրքերը կամ հարձակման հնարավոր ուղղությունները, գրոհի անցնելու հնարավոր սահմանները և ռազմական ուղղաթիռների գործողության ուղղությունները, վաշտի պաշտպանության ճակատային գիծը, դասակի և հարևանների հենակետերը, ջոկերի, տրված կրակային միջոցների դիրքերը (տանկերի կրակային դիրքերը), դասակի խրամատը և խրամուղին, դասակի կրակագոտին և գնդակոծման լրացուցիչ հատվածը, հիմնական և պահեստային կրակային դիրքերը, հետևակի մարտական մեքենաների (տանկերի, զրահապատ փոխադրիչների), ինչպես նաև տրված կրակային միջոցների թևերն ու միջնատարածքները ապահովելու համար նախատեսված միջոցների գնդակոծման հիմնական և լրացուցիչ հատվածները, սահմանագծերը, հատվածները և օբյեկտները, որոնց վրա նախապատրաստվում է հրետանու և ականանետների կրակը, կրակ պահանջելու կարգը, հենակետի և ջոկերի դիրքերի (կրակային դիրքերի) ինժեներական կառույցների սարքավորման կարգը և ժամկետները, ճակատի առջև ու թևերում տեղադրված պաշտպանության ինժեներական արգելափակոցների տեղերը և բնույթը, դրանք կրակով պատսպարելու կարգը, հրամանատարական դիտակետի տեղը:

Ջոկերին առաջադրանք տալիս դասակի հրամանատարը մարտական հրամանում նշում է.

- **Մոտոհրաձգային դասակի հրամանատարը՝** ջոկերի խնդիրները, նրանց դիրքերը, կրակագոտիները և գնդակոծման լրացուցիչ հատվածները, հետևակի մարտական մեքենաների (զրահապատ փոխադրիչների) կրակային հիմնական և պահեստային (ժամանակավոր) դիրքերը դրանց յուրաքանչյուր դիրքից կրակի և գնդակոծման լրացուցիչ գոտիները, դասակի կենտրոնացված կրակի տեղամասերը և դրանցում յուրաքանչյուր ջոկի բաժինը, տրված կրակային միջոցների խնդիրները, դրանց հիմնական և պահեստային կրակային դիրքերը, գնդակոծման հիմնական և լրացուցիչ գոտիները՝ յուրաքանչյուր դիրքից, դիպուկահարի խնդիրները, նրա հիմնական և պահեստային դիրքերը, դիտարկման և կրակ վարելու կարգը, հրաձիգ-սանիտարի առաջադրանքները և վիրավորներին բուժօգնություն ցուցաբերելու կարգը, կրակային միջոցներով հարևանների և թևերի միջնատարածքի ապահովումը:

Դասակի հրամանատարը մարտական հրամանում նշում է նաև պաշտպանության անցնելու, կրակային համակարգի, պաշտպանական հենակետի ինժեներական կառույցների սարքավորման հաջորդականությունը և պատրաստ լինելու ժամանակը:

Հակառակորդի հետ շփման բացակայության պայմաններում պաշտպանություն **կազմակերպելիս պարզաբանելով առաջադրանքը՝ մոտոհրաձգային ջոկի հրամանատարը պարտավոր է՝**

- ջոկը հասցնել ցույց տրված դիրքը,
- կազմակերպել դիտարկումը,
- ցույց տալ հետևակի մարտական մեքենայի (զրահապատ փոխադրիչի) հիմնական և պահեստային կրակային դիրքերը, գնդացրորդների, նռնականետորդի կրակային դիրքերը և հրաձիգների տեղերը (նռնականետների, հակատանկային կառավարվող հրթիռային համալիրների հիմնական և պահեստային կրակային դիրքերը),
- տալ մարտական հրաման,
- կազմակերպել դիրքերի ինժեներական սարքավորումը և քողարկումը,
- որոշել կողմնորոշիչների հեռավորությունը, նախապատրաստել օրուգիշեր կրակ վարելու տվյալներ և կազմել կրակային քարտը:

Ջոկի հրամանատարը մարտական հրամանում նշում է՝

- կողմնորոշիչները,
- հակառակորդի կազմը, դիրքերը և գործողությունների բնույթը,
- դասակի և ջոկի առաջադրանքը, դիրքը, կրակագիծը և գնդակոծման լրացուցիչ հատվածը, ցամաքային և օդային թիրախների դիտարկման և դրանց վրա կրակի վարման

կարգը, դասակի կենտրոնացված կրակի տեղամասի այն հատվածները, որոնց վրա պետք է կրակ տեղա ջոկը,

- հարևանների խնդիրները,

Մոտոհրաձգային ջոկի հրամանատարը անձնակազմին խնդիրներ առաջադրելիս նշում է.

-նշանառու-օպերատորին (զրահապատ փոխադրիչի գնդացրորդին), գնդացրորդներին և նռնականետորդին՝ հիմնական և պահեստային կրակային դիրքերը,

- ավագ հրաձիգին և հրաձիգին՝ հրաձգության տեղերը, դրանց սարքավորման և մարտի ընթացքում հերթափոխիհաջորդականությունը,

- նշանառու-օպերատորին (զրահապատ փոխադրիչի գնդացրորդին) և գնդացրորդներին՝ նաև յուրաքանչյուր դիրքից գնդակոծման հիմնական և լրացուցիչ հատվածները,

- մեխանիկ-վարորդին (վարորդին)՝ պահեստային (ժամանակավոր) կրակային դիրք հասնելու երթուղին, դիտարկման և կրակի ճշգրտման կարգը:

Առաջադրանքն ստանալուց հետո ջոկի անձնակազմը ձեռնամուխ է լինում տեսադաշտի և գնդակոծման գոտու մաքրմանը, ինչպես նար խրամատների փորմանն ու քողարկմանը:

Դասակի հրամանատարը հարձակման որոշումը սովորաբար ընդունում է ավագ հրամանատարի տեղազննման ժամանակ£

Հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից« իսկ եթե իրադրությունը հնարավորություն է տալիս՝ նաև ընթացքից հարձակվելիս մարտի կազմակերպման ամբողջ աշխատանքը կատարվում է տեղանքում£ Եթե իրադրությունը հնարավորություն չի տալիս մարտը կազմակերպել տեղանքում« դասակի հրամանատարը որոշում է ընդունում« մարտական հրաման տալիս և փոխգործողությունը կազմակերպում է քարտեզով (ուրվագծով« տեղանքի մանրակերտով)£

Տեղազննման ժամանակ դասակի հրամանատարն ուսումնասիրում է տեղանքը« մատնանշում կողմնորոշիչները և ճշգրտում է՝

- հակառակորդի պաշտպանության առջևի եզրի ուրվագիծը և կրակային« հատկապես հակատանկային միջոցների տեղադրումը« արգելափակոցների« խոչընդոտների տեղերը և բնույթը« ինչպես նաև ավագ հրամանատարի միջոցներով ոչնչացվող նշանակետերը,

- ջոկերի (տանկերի) և հատկացված կրակային միջոցների մարտական խնդիրները,

- գրոհի անցնելու և անվտանգ հեռավորության բնագիծը,

- արգելափակոցներում« խոչընդոտներում անցումներ բացելու տեղերը և դրանց նշումը« տանկերը գլանավոր ականազերծիչներով զինելու տեղերը£

Հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից նրա վրա հարձակվելիս դասակի (ջոկի« տանկի) հրամանատարը« բացի այդ« հարձակման համար ճշգրտում է ելման դիրքը (խրամատի դիրքը)« հետևակի մարտական մեքենաների (զրահապատ փոխադրիչների)՝ դասակի մոտ հասնելու երթուղին« տանկերի հասնելու տեղերը և դրանց նշումը« իսկ ընթացքից հարձակման դեպքում՝ առաջխաղացման երթուղին« բացազատման բնագծերը« տանկի վրա դեսանտի նստեցման և հետիոտն գործելու տեղերը£

Տեղազննմանը սովորաբար մասնակցում են ջոկերի հրամանատարները երբեմն էլ մեխանիկ-վարորդները

Մարտական հրամանում ջոկի հրամանատարը նշում է՝

- կողմնորոշիչները,

- հակառակորդի կազմը« դասավորությունը և գործողությունների բնույթը պաշտ-պանության առջևի եզրի ուրվագիծը և նրա կրակային միջոցների տեղաբաշխման վայրերը,

- դասակի և ջոկի առաջադրանքները (գրոհի օբյեկտը« հարձակումը շարունակելու ուղղությունը),

- հարևանների առաջադրանքները« այն տանկի առաջադրանքը« որի ետևից պետք է հարձակվի ջոկը« նրա համարը (տարբերանշանը)« ինչպես նաև հրետանու և կրակային միջոցների կրակն օգտագործելու կարգը,

- անձնակազմի առաջադրանքները

Մոտոհրաձգային ջոկի հրամանատարը՝ ամբողջ անձնակազմին՝ հետիոտն շարժման անցնելու կարգը« յուրաքանչյուր զինվորի տեղը ջոկի շղթայում« արգելափակոցների և արգելքների հաղթահարման կարգը« նշանառու-օպերատորին (զրահապատ փոխադրիչի գնդացրորդին)« գնդացրորդներին և նռնականետորդին« իսկ հարկ եղած դեպքում մնացյալ անձնակազմին՝ խոցման ենթակա նշանակետերը և հրաձգության կարգը« մեխանիկ-վարորդին (վարորդին)՝ գրոհի ուղղությունը« առաջխաղացման« արգելափակոցների և խոչընդոտների հաղթահարման կարգը£

Մարտական հրամանը ջոկի հրամանատարը տալիս է տեղանքում, իսկ անհնարինության դեպքում՝ ուրվագծում (տեղանքի մանրակերտում) և ճշգրտում է տեղանքում մարտական առաջադրանքը՝ դեպի գրոհի անցման բնագիծ շարժվելու ժամանակ կամ գրոհի սկզբում:

Եզրակացություն

Վերլուծելով դասակի և ջոկի հրամանատարի աշխատանքի կարգը մարտական գործողությունների ընթացքում հասկանում ենք որ մեծ է դասակի և ջոկի հրամանատարի պատասխանատվությունը մարտական գործողություններ կազմակերպելիս: ՈՒսումնասիրելով ՀՀԶՈՒ-ում գործող մարտական կանոնադրություններն ու մարտավարության դասագրքերը նկատում ենք որ ջոկի հրամանատարին վերաբերող մասով մարտի կազմակերպման աշխատանքները ունեն շատ բացթողումներ օրինակ իրավիճակի գնահատման, որոշման ընդունման և փոխգործողության կազմակերպման կետերը չեն կարևորվում ջոկի հրամանատարի մարտի կազմակերպման աշխատաքի կարգում և բովանդակությունում, ինչն էլ հանգեցնում է ջոկի հրամանատարի ինքնուրույնության բացակայությանը:

Նզպ առարկայի շրջանակներում դասագրքային թեմաների յուրացման վերը նշված մոդելը կիրառում եմ իմ դասավանդած դպրոցում և զորացրված աշակերտներս հավաստիացնում են ,որ մարտավարության հիմունքների իրենց անցած տեսական և գործնական դասերը հնարավորություն են տվել արագ կողմնորոշվել փոփոխվող պայմաններում և ուսումնական փուլերում լավ արդյունքներ ցույց տալ:

Երբ դպրոցականները մարտավարության թեմաներին տիրապետեն որպես դասակի և ջոկի հրամանատար և անցնեն ծառայության նրանք առանց դժվարությունների կընկալեն հրամանատարների մարտավարության կազմակերպման հրամանները և նույնիսկ կբացատրեն իրենց ստորաբաժանման մյուս զինվորներին:44-օրյա պատերազմին նորակոչիկները ևս մասնակցեցին մարտի:Առաջնային անհրաժեշտություն է դպրոցում մարտավարության տիրապետման բարձր մակարդակ ապահովել:Մարտավարության տիրապետման բարձր մակարդակը թույլ կտա նաև թշնամու տեղաշարժի դիտարկման ժամանակ կռահետ նրա կիրառելիք մարտավարությունը և անակնկալի չգալ:

Առաջարկում եմ կիրառության դնել մարտավարության դասընթացի իրականացման այս տարբերակը,որն արդեն փորձված է :

Օգտագործված գրականությունը

ՀՀ ԶՈՒ ՄԿ մաս III, Եր. 2007թ.:

«Մարտավարություն (դասակ, ջոկ, անձնակազմ)» Եր. 2014թ.:

Զինվորի, մոտոհրաձգային ջոկի, դասակի մարտական պատրաստության ձեռնարկ:

«Հայ Զինվոր» թերթ N-21, 2-9 հունիսի 2007թ:

Արտասահմանյան ռազմական լուսաբանման 2008թ., N- 7